

ՏԵՍԱՐԱՆ Վ.

ՄՕՐԻՍ ԵՒ ԱԼԲԵՐՏ.

ԱԼԲԵՐՏ. Բարեւ: Այսօր ինձ վերայ յոյս չգնէք՝ երեկոյան ձեմարանում ժողով ունենք: Ես անպատճառ պիտի ներկայ լինեմ, որպէս զի չկարծեն, թէ թաղնւում եմ: Տեսնո՞ւմ էք ինչպէս են գլուխ ինձ մամուլի մէջ:

ՄՕՐԻՍ. Այո. շատ ցաւալի է:

ԱԼԲԵՐՏ. Որքան մաղձ ու դառնութիւն... Եւ ամենքն էլ իմ ընկերակիցներս: Մարդիկ, որոնց գլխում մի առողջ միտք, դատողութիւն օր ցերեկով՝ ճրագով չէք գտնիլ. այո՛, այնպիսի պարոններ, որոնք դարձանի տակի ջուր են, գիտեն հետքը կորցնել... այդպիսիներն՝ այժմ դնչները շատ բարձր են ցցել:

ՄՕՐԻՍ. Բայց մենք էլ, իսկական գիտնականներս, բիչ չենք, որ ձեզ պաշտպանում ենք:

ԱԼԲԵՐՏ. Օ՛հ, ես այժմ կամաց-կամաց սովորում եմ վարժուել դուրսեան հետ: Միայն սաստիկ խղճում եմ կնոջս—այս ամենը նորան չափազանց վրդովեցնում է և զգում եմ, որ իմ արարքներովս սարսափ եմ ազդում նորան: Նա, իհարկէ, չի կարող հասկանալ իմ ձգտումների ամբողջ ծանրութիւն ու դժուարութիւնը: Եւ եթէ երբ և իղի յաղթանակեմ նոյն իսկ և կատարեալ փառքի հասնեմ, ապա այն ժամանակն էլ նա ինձ չի կարող ներել այն միջոցների գործադրութիւնը, որով ես հասայ դորան:

ՄՕՐԻՍ. Կինն ըմբռնել չէ կարող և նոյն իսկ տղամարդոց մեծամասնութիւնն էլ այդպէս է: Տեսէք. երգուեալ դատաւորներն արդարացնում են մէկին, որ յանցանք է կատարել կրթի շարժառիթից ստիպուած, այն ինչ ձեր...

ԱԼԲԵՐՏ. Կամենում էք ասել ոճիրը... Դուք էլ է՛ք ոճիր անուանում այդ:

ՄՕՐԻՍ. Ոչ: Այդ չէի կամենում ասել: Ի՞նչ ոճիր կարող է լինել այնտեղ, երբ մարդկային այդ ծուկներից օգուտ էք կորզում՝ յանուն գիտութեան: Կատարեալ իրաւունք ունիք:

ԱԼԲԵՐՏ. Հապա՛հ. Դուք զոնէ քար ձգողներից պիտի չըլինէք...

ՄՕՐԻՍ. Ի՞նչպէ՛ս:

ԱԼԲԵՐՏ. Մի յետ նայեցէք, մտարերեցէք անցեալը ին-

չո՞վ էինք զբաղւում այստեղ՝ այս սենեակում: Այն հիւանդոտ ջղերի դրցակից, որ մենք ընթակայ (subject) ենք անուանում, դուք այնպիսի մեծ բանակութեամբ զանազան հոգեկան կրքեր ու բերումներ էք դուրս կորցում, որ առաջին պատահած մէկի մէջ զանազան բոլոր անձնաւորութիւնների համար լիովին կը բաւականանար. նորա ուղեղի մէջ դուք ներշնչում, դնում էք ամենազանազան պատկերացումներ, մի խօսքով, դուք ոչնչացնում էք ձեր բոլոր ընթակայների՝ հիւանդների ինքնուրոյնութիւնը, փոխարինելով՝ և այն էլ ըռնազբօսիկ միջոցներով նորերով... ինքնուրոյնութիւնը, սեփական ետի ոչնչացումն էլ նոյնպիսի ուժիւր է: Ցարբերութիւնը միայն բառերի մէջ է: Ինչ էք նայում ինձ այդպէս...

ՄՕՐԻՍ. Ես լսում եմ դատավճիռս, ինչպէս յանգւորը դատախազինն է լսում:

ԱԼԲԵՐՏ. Սխալւում էք: Ես ապացուցանում եմ, որ դուք սպանութիւն էք գործում, բայց ես չասացի, որ իրաւունք չունէք այդ բանն անելու: Իւրաքանչիւրը, ով մի նոր բան է մտցնում... իւրաքանչիւր «որոնող», լինի դա գրող, փիլիսոփայ, գիտնական, միենշոյն է, սպանութիւն է կատարում: Նորա որոնք քանդում, կործանում են նախկին հաւատալիքներն ու աւանդական կարգերը, մասամբ և ջարդում են ու փշրում այն անօթները՝ որոնց մէջ այնքան խնամքով պահպանւում էին դուք: Մարդկութիւնը, մանաւանդ կազմուած է այնպիսի անհասանդիք, որոնք հոգում են նիւթական կենսական բարօրութեան համար: Իսկ ընդհանրապէս, բոլոր մարդկութիւնը շարժւում, ղեկավարւում է միայն այնպիսի գաղափարներով, որոնք նորա համար այնքան թանգազին և սուրբ են, որ եթէ դուք դոցանից մէկը ոչնչացնում էք, հապարաւոր դժբաղդ տարածներ զոհ են դառնում ձեր արած մի քայլին: Խորհող փիլիսոփայն թափառւում է այնպիսի ուղիներով, որը դիակնեւրով է ծածկուած և յաճախ իւր դիակն էլ է այնտեղ թողնում: Իւրաքանչիւր մարդ, որ մի նոր, յիրաւի նոր, առջ բան է գրում, կարող է ապագայում նոր զոհեր, նոր սպանութիւններ սպասել՝ բայց դորանից չի հետևում, թէ մենք պարտաւոր ենք լռել և ծածկել այն մեծ ձշմարտութիւնները, որ գտնւում, յայտնագործւում ենք:

ՄՕՐԻՍ. Ձեր խօսքերը մարդու սարսափեցնում են:

ԱԼԲԵՐՏ. Ամենքդ էլ մի սանրի կտաւ էք,—էք կամե-

Շուրժ նոյն իսկ մահուան անունը լսելի Գիտէ՛ք, բարեկամ, աշխարհումս երկու հոգի կան, որոնք շարունակ, իրենց ամբողջ կեանքի մէջ գործ իւնին մահուան հետ,—բժիշկը և քահանան։ Եւ դա այնպիսի դժուար, ծանր պաշտօն է, որ երկուսն էլ հընարաւորութիւն են ստանում գործին հասարակ աչքով, աստորական հայեացքով չվերաբերելու։ Գահանան, աչքի առաջ ունենալով մեռածների յարութիւնը՝ յաւիտենական կեանք է խոստանում։ Նորա համար մահը—ամենապարզ փոխանցումն է մի վիճակից միւսը, փոխարկութիւն դէպի լաւագոյն վիճակ, նոր կեանք։ Բժիշկը գիտութիւնից իւր համար կրօն է ստեղծում և գլուխ խոնարհեցնում նրա առաջ, ինչպէս կուռքի առաջ. հաւատում է նորան, ինչպէս ամենամիլենարդ հաւատացող և մեռնում—նահատակում է նորա համար, ինչպէս կատարեալ մարաբրոս, եթէ այդ է պահանջում նորանից գիտութիւնը։

ՄՕՐԻՍ. Դուք շատ բանի մասին էք խորհել, որո՞ճացել մեռելականից դէտը։

ԱԼԲԵՐՏ. Այո, ճշմարիտ է։ Մեր կեանքում կան վայրկեաններ, երբ պէտք է կանգ առնենք և շունչ քաշենք, խորհենք ու կշռենք անցած ճանապարհը և այն նպատակը, որին ձգտում ենք։

ՄՕՐԻՍ. Ես համաձայն չեմ։ Նրբ ձեր առաջ պատկերացած-կանգնած է մեծ գաղափարը, նպատակը և բուռն եռանդը ձեզ ձգում-քաշում է դէպի նա, այն ժամանակ ամեն ճանապարհ ու միջոց լաւ է։ Պէտք է առաջ դիմել, դիմել առանց կանգ առնելու և չորս կողմը աչք ածելու։ Իզուր ժամավաճառ չպէտք է լինել և ոչ էլ իւր խեղճը վերստուգել։ Դա—թուլամորթութիւն է։ Միջոցների աւելորդ խորութիւնը միայն գործն է յետաձգում։

ԱԼԲԵՐՏ. Այո, ես այդպէս էլ արել եմ։ Միջոցների խորութիւն դնելու մէջ ինձ չեն կարող դատապարտել... Այդ թուլութիւնը ես չեմ ունեցել... Բայց և այնպէս, կան րոպէներ, երբ պէտք է գլուխներս բարձրացնենք ու մի չորս կողմերս դիտենք։ Ապա թէ ոչ, գիտէ՛ք, շատ քիչ զանազանութիւն կլինի ընդ տակ քաշած եզրի և մեր աշխատանքի մէջ,—մաքի, խոհականութեան մշակներիս աշխատանքի մէջ։ Ես չեմ կարող ենթադրել, որ իսկապէս գիտնական մարդը—խորհողը, և ոչ ամենագէտ՝ դժմագլուխ—խելապոստակը,—ասում եմ, որ այդ խորհող գիտնականը իւր աչքերը բարձրացնէր, չ'յառէր

դէպի վեր, բարձունք և Աստուած չորոնէր:

ՄՕՐԻՍ. Բայց դուք՝ ինքներդ էք շատ անգամ կրկնել ինձ, թէ շատ յաճախ էք տեսել ձեր հիւանդների հոգին ձեռքով արթնութեան դանակի ծայրին, հետեւաբար և չէք կարող հաւատալ պրոպիետի հոգեպաշտական տեսութիւններին Սա ձեր սեփական խօսքերն են:

ԱԼԲԵՐՏ. Դորա գիտնականի խօսքեր չեն:

ՄՕՐԻՍ. Եւ ի՞նչ կարիք ունեն գիտնականներն զրազուելու այնպիսի մի խնդրի, առեղծուածի լուծումով, որի համար նախադրեալներ, փաստեր չունեն:

ԱԼԲԵՐՏ. Նախադրեալներ, փաստեր չկան: Հապա յաւիտենականութեան այն զգացումը, այն ցանկութիւնը որով ամբողջ բնութիւնը մինչ այն աստիճան առլցուած է, որ ամենահասարակ, սովորական առարկան անգամ,—օրինակ սեղանը,—չէի կարող երեւակայել, առանց այն բանի, որ իմ երեւակայութեան մէջ չպատկերանային բոլոր սեղանները՝ այժմեանները, անցած ժամանակինը և ապագայինը: Եւ յանկարծ, իմ բանականութիւնս, որ ամեն մի առարկայի յաւիտենականութեան գաղափարն է մասակարարում, յանկարծ՝ ինքը զուրկ է դորանից... Դատարկութիւն... ոչինչ... կարելի՞ է մտածել այդ մասին առանց սարսուռ զգալու: Կարելի՞ է, Ոչ, մի ասէք: Այդպէս է թւում միայն հեռուից: Ինձ ծանօթ է փառք ասածդ: Յաղթանակի այնպիսի բոլորներ եմ ունեցել, որ եթէ դոցա մասին երիտասարդութեանս ժամանակ գուշակէին, ես կրացականչէի—«Միայն թէ ապրէի մինչ այդ բոլորն, իսկ այնուհետեւ թէեւ մահս հասներ: Եւ ես ապրել եմ մինչ այդ բոլորները, սակայն մեռնել... չեմ կամենում: Մօտ ժամանակներս էր, որ դէպքերի զուգորդութեան շնորհիւ, ատրճանակի փողը քներակիս ուղղեցի,—կասեմ, յետոյ, թէ ինչպէս,—այն հաստատ որոշումով, որ անձնասպանութիւն գործեմ... Եւ, անկեղծ եմ ասում, այդ ժամանակ զգացի, թէ ինչ սարսափ կարող է զգալ մարդ, երբ չէ հաւատում յաւիտենականութեան: Երկուսս էլ տարուած, տողորուած մարդ ենք նոր գիտութեան գաղափարներով, թէ իւրաքանչիւր բնական երևոյթ պէտք է անպատճառ իւր համապատասխան առարկան ունենայ, օրինակ, աչքի համար—լոյսը, թոքերի համար—շնչառութեան պիտանի մթնոլորտ և այլն և այլն: Այժմ մի փոքր տրամաբանօրէն մտածենք: Եւ իրական կան կեանքի այդ բոլորն տենչանքին՝ պէտք է համապատաս-

խանէ և յաւիտենական կեանքը: Այն ինչ դուք չէք կամենում տալ ինձ այդ յաւիտենականութիւնը, Բայց իմ բանականութիւնս, դիտնականի բանականութիւնս, վրդովուում է: Ինչո՞ւ էք կարծում, թէ նորա գոյութիւնը բացասելով դուք հշտացնում էք տիեզերական խնդրի լուծումը, ես այդպէս չեմ կարծում:

Անցեալ դարնան իմ կալուածումս էի. այնտեղ ունեւ իմ սիրած անկիւնս՝ լճակի ափը, որ լիքն է սպիտակ ջրային շուշաններով: Այս տարի, ձիւների ուշ հալուելու պատճառով, լըճակի ջուրը շատշատ էր բարձրացել և շուշաններն իրենց կարճ ցողուններով չէին կարող հասնել ջրի մակերևոյթին: Հարիւրաւոր սպիտակ կոկոններ էին երևում ջրի բարակ շերտի տակ. բոլոր դուրս էր մղում իւր գլխիկները, լարի պէս ձգուած ցողուններն օրէցօր բարակում ու բարակում էին: Մի վերջին ճիգ ևս, և գուցէ, արմատախիլ կլինէին: Աեանքի ձգտման այդ մաքառման մէջ օրհասական, հերոսական մի բան կար: Իւրաքանչիւր օր դիտում էի այդ երևոյթը և, տեսնելով, որ ջուրը շատ դանդաղութեամբ է պակսում, ես մտքով գիմում էի դէպի նոցա ձողոց—քաշող արեւը: Մի՞թէ նա չի յաղթանակի, մի՞թէ տիրուն ծաղիկները չեն դիմանայ այդ անհաւասար կռուին: Բայց վերջապէս, արեւը յաղթանակեց և հիանալի, սպիտակ, քացուած շուշանների անթիւ—անհամար ծաղիկների ծովը զարդարեց լճակի մակերևոյթը: Տեսնում էք, իմ սիրելի պառս, այդ ծաղիկներն ինձ որոշ մտքերի առաջնորդեցին: Ես և գուր, մենք ամենքս, գիտնականներս, գիւտեր անողներս, մենք այդ ծաղիկների կոկոնների պէս խորասուզուած ենք անգիտութեան, անյայտութեան և խաւարի լճակի մէջ և աշխատում ենք, ջանք ենք թափում, վիզներս՝ ոյժերիցս աւելի ձգելով, հասնել ջերմ, փափազելի լոյսին: Ո՞ր արեւից կծագէ մեզ համար այդ լոյսը՝ ես չգիտեմ: Բայց այդ արեւը գոյութիւն պիտի ունենայ:

ՄՕՐԻՍ. Ի հարկէ, ի՞նչ կասկած: Այն արեւը, որին ձրգտում ենք մենք,—կենսաբանական ճշմարտութիւնն է. իմս—հագեբանական ճշմարտութիւնն է, ուրիշները—բնական գիտութիւնների, մատեմատիկայի և այլ ճշմարտութիւնը: Որքան գիտութիւն՝ նոյնչափ և արեւ:

ԱԼԲԵՐՏ. Բայց եթէ լինի մի ճշմարտութիւն, որի մէջ չիւանում—ձուլում են միւսները: Չէ՞ որ իմ բոլոր շուշանները

Հգտում էին միեւնոյն արեին:

ՄՕՐԻՍ. Հէնց պղտեղ է նոցա ու մարդկանց զանազանութիւնը: Խոստովանեցէք, որ երբ դուք նստած էիք լճակի ափին, ձեր մաքուր անգամ չէր անցել այն համեմատութիւնը, ինչ որ արեք այժմ, այն ըոպէին, որ ձեզ համար աւելի ծանր էր, քան ենթադրում էք:

ԱԼԲԵՐՏ. Գուցէ:

ՄՕՐԻՍ. Ահա չորս տարի է, որ մենք աշխատում ենք միասին և երբէք դուք, ոչ մի անգամ, չէք շոշափել կրօնական հարց. այն ինչ պսօր անգագար նորա շուրջն էք էք պատում անգագար յարուզանում: Գիտե՛ք ինչ է ապագայանում այդչ. Որ չնայելով ձեր ուժեղ բնաւորութեան, այնուամենայնիւ գտնւում էք ներկայ ծանր հանգամանքների զօրեղ ազդեցութեան տակ: Դուք կրօնական պայքարի մէջ էք գտնւում, որ ամենքիս քաջ յայտնի է: Ե՛ւ ծանր վշտի տակ ճնշուած անհատը, և՛ մահաւան տապնագի մէջ գտնուող հիւանդը, երկուսն էլ՝ նոյն հոգեկան վիճակի մէջ են գտնւում: Ամենագորեղ մտքերն անգամ անհաւատութեամբ կարող են պաշարուել: Այդ վիճակը մենք մեռնողների սնահաւատութիւն ենք անուանել:

ԱԼԲԵՐՏ. Լսեցէք, Մօրիս, դուք վարպետ ախտաբանական նշաններ որոշող էք...

ՄՕՐԻՍ. Ի՞նչու էք ծաղրում...

ԱԼԲԵՐՏ. Ոչ, լուրջ եմ ասում: Շա՛տ ուղիղ է. — մեռնողի սնահաւատութիւն:

ՄՕՐԻՍ. Եւ կամ դորա պէս մի բան: Շատ պէտք է տանջուած լինիք, մինչև որ այդ կէտին էք հասել:

ԱԼԲԵՐՏ. Լսեցէք: Ձեր կռահումն արժէ վարձատրել իմ կողմից մի փոքրիկ խոստովանութեամբ: Խնդիրն ամբողջ գոռում-գոչումի մէջ չէ. խնդիրն այլ է բոլրովին: Ես բժշկում էի մի աղջիկ, որ թոքախտ ունէր. նորան սրտկեցի, պատուաստեցի մահալու թոյն... ևս երէկ տեսայ նորան... բոլորովին առողջացած թոքախտից: Մինչ այն աստիճան շշմած էի, որ պատրաստ էի... (Ատրճանակով սպանուելու փորձի շարժում է անում):

ՄՕՐԻՍ. (Վրդովուած). Անկարելի է:

ԱԼԲԵՐՏ. Գործերս կարգի բերի և վճռեցի:

ՄՕՐԻՍ. Իհարկէ, շատ ցաւալի է, սակայն աղջիկը զոհ կերթայ ձեր փորձին. բայց որ նորա պատճառով ձեզ պէս մէկը...

ԱԼԲԵՐՏ. Եւ գիտէ՞ք ինչը փրկեց ինձ:

ՄՕՐԻՍ. Ինքնապահպանութեան բնազդը:

ԱԼԲԵՐՏ. Ամենէն Պատերազմի մէջ մեծացած մի գորապետի հարցրին, թէ երբեկեղ զգացե՞լ է երկիւղի զգացում, պատասխանեց— ոչ. սակայն, աւելացրեց, միշտ բռնուած էի, պատերազմի վերջն իմանալու բուռն ցանկութեամբ և զգացումով: Այդպիսի հետաքրքրութեամբ պսո՞ւմ ինքս եմ բռնուած: Ես, պէտք է ենթադրել, պատուաստների շրջանի մի մեծ գիւտի նախօրէքին եմ ապրում... և մինչև այդ վայրկեանի հասնելը՝ մեռնել, ինձ համար անկարելութիւն թուաց: (Մօրիսն անթարթ նայում է նորան): Ինչ պատահեց ձեզ:

ՄՕՐԻՍ. Տարօրինակ բան... Ձեր աչքերն այս րոպէիս մի ուրիշ արտայայտութիւն ունին... յիշեցնում են մէկին... Սպասեցէք... Հա, Կլեմենտինային: Յիշո՞ւմ էք:

ԱԼԲԵՐՏ. Նա, որ երեակայում էր, թէ իւր զաւակին սպանե՞լ է:

ՄՕՐԻՍ. Այո, այն երեխան, որ մեռաւ խուռկից (croup)՝ Յիշո՞ւմ էք մենք ներշնչեցի՞նք նորան, թէ իւր մէջ երկու կին կայ: Եւ որ սպանող կինը պառկած է գահաւորակի վերայ և ինքը պէտք է սպանէ նորան: Այնտեղ պառկած էր տիկնիկը, իսկ մենք նորա ձեռքը տալինք դանակ: Վերջը ներշնչեցինք, թէ բանի որ իւր հակառակորդն արդէն սպանուած է, ուրեմն և ինքը պէտք է դոհացում ստացած համարէ իրեն և այլ ևս չմտած է այդ մասին: Յիշո՞ւմ էք նորա հայեացքը, երբ նա «սպանում» էր տիկնիկը:

ԱԼԲԵՐՏ. Այսինքն՝ ինքն իրեն:

ՄՕՐԻՍ. Ժիշտ պսո՞ւմ, ձեր հայեացքը նոյնն է արտայայտում:

ԱԼԲԵՐՏ. Ա... (Նարձ լռութիւն): Բոլորովին հիացած եմ ձեզնով: Ջարմանալի գիտող ոգի ունիք: Ձեզ կարելի է յանդիմանել միայն այն բանի համար, որ ձեր դիտողութիւններից չէք հանում այն բոլոր օգուտները, որ կարող էք ստանալ նոցանից... Բայց ըստ ինքեան զարմանալի է ձեր այդ ունակութիւնը: Ինքներդ դատեցէք: Ասում էք, որ իմ հայեացքս նման է այն կնոջ հայեացքին: Երեակայեցէք, որ ես էլ նորանման մի բան եմ արել: Այս առաւօտ ես սպանութիւն եմ կատարել:

ՄՕՐԻՍ. Ինչ:

ԱԼԲԵՐՏ. Գիտէ՞ք, ի՞նչն է իմ փոճերի ամենագլխաւոր զժուարուծիւնը: Այն որ ես միշտ իմ փորձերս կատարել եմ հիւանդների վերայ, որոնք աւելի կանուխ էին մեռնում, քան ես կարողանում էի իմ գլխաւոր դիտողութիւններս սկսել: Այսօր ես մի նոր փորձ սկսեցի, որ վերջնական և վճռական դեր կկատարէ,—եւ պատուաստեցի բոլորովին առողջ և ուժեղ մի տղամարդու...

ՄՕՐԻՍ. Ձեւ հաւատում: Լոկ միայն աչքի առաջ ունենալով այն ընդհանուր վրդովմունքը, որով շրջապատուած էք այժմ, դուք չէիք համարձակիլ:

ԱԼԲԵՐՏ. Ձէի համարձակի՛ր՝ Իհարկէ, ոչ հիւանդանոցում... այլ իմ տան մէջ եմ կատարել... Ձէ՛ որ ասացի ձեզ, այն բուպէին երբ ատրճանակը ձեռքս առայ, մի անզուսպ ցանկութիւն ծնեց մէջս, որ անպատճառ դիտողութիւններես... և գործիս վախճանը տեսնեմ: Ես գործի կպայ (Հանելով թղթապանակից մի կտոր [թուղթ]), 'Այս նոր արձանագրութիւնն էլ դրէք միւս ապագուցածութիւնների հետ. (Կարդում է):

«28 հոկտեմբեր. 43 տարեկան, ուժեղ, բոլորովին առողջ կազմուածքով մի տղամարդ. Ոչ մի ժառանգական հիւանդութիւն չունի. Առաւօտեան 4 ժամին պատուաստուեցաւ ժանկութեան (virus) № 2, սրսկուելով 10 ցենտիգրամ, աչ ծծից 3 սանտիմետր ցած. 4 ժամ և 50 րոպ. երեւեցաւ մի փոքր ջերմ, դողողով ու սիրտ-խառնոցով»:

ՄՕՐԻՍ. (Թուղթը խլելով նհրա ծեռքից). Դո՛ւնա, կատարեալ... չարագործ էք:

ԱԼԲԵՐՏ. Իմ դատաւճիռս կարգալուց առաջ, մի մոռանաք գլխաւորը:

ՄՕՐԻՍ. Այսինքն.

ԱԼԲԵՐՏ. Որ այդ առողջ և ուժեղ անձնաւորութիւնը իւր անձի կատարեալ տէրն է և ինքն իրեն առաջարկեց ինձ.

ՄՕՐԻՍ. Ի՛նքը համաձայնեց:

ԱԼԲԵՐՏ. Այո՛:

ՄՕՐԻՍ. Իմանալով, թէ ի՞նչ վտանգի է ենթարկոււմ:

ԱԼԲԵՐՏ. Անպայման. Նա գիտէ, որ առաջ քան մահը կյաւիշտակէ իրեն սարսափելի տանջանքներ պատճառելով, ինքը կսկսէ կենդանի-կենդանի փութիլ:

ՄՕՐԻՍ. Եւ նա այնքան ողջմիտ մարդ է, որ կարող էք այդ էլ երեւակայե՛լ:

ԱԼԲԵՐՏ. Այո, հէնց այդ պատճառով: Նա մի մեծագործութիւն է տեսնում իւր արածի մէջ, հասկանալով միեւնոյն ժամանակ և նպատակի վեհութիւնը:

ՄՕՐԻՍ. Չափազանց մեծ բայլ ու արարք է... եթէ ես ինէի ձեր տեղը՝ չէի համարձակիլ նորա աչքերի մէջ նայել: Եւ ի՞նչ բանի համար: Որպէս զի նորա մասին խօսեն մամուլի մէջ, երբ դուք ձեր փառքով արեցեա՞ծ կպատմէք նորա մասին, որպէս զի XX դարի հանրագիտականի մէջ նորա անունն էլ մտնէ: Բայց դեռ ևս այդ էլ խնդիր է: Այդպիսի անձնագոհութիւնները շատ անգամ անփառունակ են կորչում:

ԱԼԲԵՐՏ. Այդ մարդը իւր պատճառներն ունի առանց փառաբանութիւնների ցանկութեան մահ որոնելու:

ՄՕՐԻՍ. Երևի որևէ դժբաղդութիւն... խղճի խայթօց ստիպում է...

ԱԼԲԵՐՏ. Ո՛չ, միայն դիտութեան ծարաւն է ստիպում: Երբ ես թոյնը սրսկում էի նորա մէջ նկատեցի այն հետաքրքրութեան կայծը, որ զգում էր և իւր մէջ զօրապետը պատերազմից առաջ... և որ ինքս էլ եմ զգում:

ՄՕՐԻՍ. Ա՛յ, թէ ում կարելի է համեմատել ձեր ջրային շուշանների հետ: Լարի պէս ձգուած ցօղունները, որ կարծես այս րօպէիս պիտի կտրուէին:

ԱԼԲԵՐՏ. (Հալով): Եւ՛ յանկարծ նորա կտրուին առանց իրենց արեգակը... գտնել կարողանալու: Եւ ի՞նչ, եթէ բնութիւնը պարգևել է նորան ճշմարտութիւնը որոնելու անյագ ծարաւ, որպէս զի երբեք, երբեք չկարողանայ գտնել այդ ճշմարտութիւնը... Օ՛ր, ինչ դարհուրելի ստորութիւն...

ՄՕՐԻՍ. Այդպէս է բնութիւնը:

ԱԼԲԵՐՏ. Կարծո՞ւմ էք: Սակայն յաղթութիւնը նա տալիս է միշտ ամենաուժեղին:

ՄՕՐԻՍ. Ձեր աչքերի մէջ արցունք է փայլում:

ԱԼԲԵՐՏ. (Ժպտում). Բնութիւնն ինձ վերայ այդպիսի ազդեցութիւն ունի... բայց ժամանակն անցնում է: Ես ուշանում եմ... Մնաք բարև: Կանոնաւորապէս այդ մարդու հիւանդութեան մասին տեղեկութիւններ կուղարկեմ ձեզ: Մնաք բարև: (Արագ դուրս է գնում: Մօրիսը նորան ճանապարհ է դնում եւ դառնում ու տեսնում է Լուիզային):

ՏԵՍԱՐԱՆ VI

ԼՈՒԻԶԱ ԵՒ ՄՕՐԻՍ.

ԼՈՒԻԶԱ (Սաստիկ այլալուաժ)։ Այն ժարդը, որին սպանել է՝ ինքն է, ինքը...

ՄՕՐԻՍ. Ի՞նչ էք ասում... Անկարելի է.

ԼՈՒԻԶԱ. Ինքն է, Այսօր առաւօտեան ժամը չորսին նորա մօտ ոչ ոք չէ եղել. նա մեն-մենակ էր. Եւ դուք ծաղրում էիք նորա տարակուսանքները, հեզնում էիք նորա վիշտ ու թախիծը։ Եւ դուք քաջութիւն ունեցած ջրելու նորա յաւիտեանական կեանքի մասին ունեցած խոհերը, որը նա հայցում էր ձեզնից արտասուաթոր աչքերով... Մնաք բարեւ, Ես այլ ևս անկարող եմ... Ես չեմ կարող նորան միայնակ թողնել։

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

Գ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ա. Գործողութեան գեղոյրները (décoration). Երեկոյ է:

ՏԵՍԱՐԱՆ I.

ԼՈՒԻԶԱ ԵՒ ԵՒԳԵՆԻԱ

Լուիզան ներս է մտնում, միևնոյն ժամանակ միւս դռնից մտնում է աղախինը և օգնում է գլխարկը, կրկնօրը, ձեռնոցները հանելու: յետոյ վառում է ճրագը և վարագոյրը ցած ձգում: Լուիզան նոյն զգեստով, ինչ որ Բ. գործողութեան ժամանակ:

ԼՈՒԻԶԱ. Պարոնը դեռ ևս չէ՞ վերագարձել...

ԵՒԳԵՆԻԱ. Ոչ դեռ ևս:

ԼՈՒԻԶԱ. Ոչ որ չէ՞ եկել:

ԵՒԳԵՆԻԱ. Ոչ, տիկին, ոչ որ: Փառք Աստուծոյ, ամեն օր ոստիկան գալու խօս չէ: Երէկ, երբ գերձկուհու մօտից էի վերադառնում, զանգ եմ տալիս և յանկարծ, դուռը բաց է անում ոստիկանատան ծառայողը... քիչ էր մնում նուազէի...

ԼՈՒԻԶԱ. Նամակ չկայ...

ԵՒԳԵՆԻԱ. Չեմ տեսել: Լրագիրներն առանձնասենեակումն է: Կհրամայէ՞ք բերե՛մ...

ԼՈՒԻԶԱ. Բերէք և յետոյ տուէք կանխազգեստս:

ԵՒԳԵՆԻԱ. Իսկ ճաշին ի՞նչ զգեստ կհագնէք...

ԼՈՒԻԶԱ. Նոր զգեստ. չեմ հագնիլ:

ԵՒԳԵՆԻԱ. Լաւ էք անում: Ապա թէ ոչ այնպիսի յոգ-նած տեսք ունիք, որ... (Բերած շորը ղնում է ըստ կանխազգեստի վրայ):

ԼՈՒԻԶԱ. Ախ, մոռացել եմ բոլորովին: Ասացէք Բագտիստին, որ մեզ մօտ մի աղջիկ պիտի գայ. նա մեզ մօտ պիտի ապրէ: Բայց որտե՞ղ պիտի տեղաւորենք նորան:

ԵՒԳԵՆԻԱ. Սեյանատան կից սենեակը չի՞ լինի:

ԼՈՒԻԶԱ. Բայց այնտեղ էլ շատ փոքր է, օդ չկայ... Ա-
ւելի լաւ է կապոյտ սենեակը:

ԵՒԳԵՆԻԱ. Այնտեղ այնքան ապուռ—ճպուռ կայ, որ...
կարգի բերելն էլ ահագին նեղութիւն է... (Ներս է մտնում
Ալբերտը):

ԼՈՒԻԶԱ. Լաւ. այս բոպէիս ինքս կգամ, կտեսնեմ (Նե-
գննիւմ դուրս է գնում):

ՏԵՍԱՐԱՆ II.

ԼՈՒԻԶԱ ԵՒ ԱԼԲԵՐՏ.

ԼՈՒԻԶԱ. (Մօտենալով ամուսնուն)։ Ալբերտ...

ԱԼԲԵՐՏ. (Կամացուկ հեռացնելով)։ Հա, լաւ, լաւ,

ԼՈՒԻԶԱ. (Քաշուելով, անվստահ)։ Դու ինձ դէ՞ն ես
հրում:

ԱԼԲԵՐՏ. Ո՛չ, բայց թող ինձ:

ԼՈՒԻԶԱ. Դիտե՛ս, պէտք է ասեմ քեզ...

ԱԼԲԵՐՏ. Ի՞նչ: Եթէ խնդիր է, այն ժամանակ, ինչ որ
կամենում ես... համաձայն եմ Միայն, աղաչում եմ, առանց
լաց ու կոծի: Հանգիստ թողէք ինձ, ի սէր Աստուծոյ, հան-
գիստ... (Ընկնում է ըազկաթոռի մէջ): Սառանան գիտէ թէ
ինչ... Հան օր է քաշածս, շան:

ԼՈՒԻԶԱ. Մի՛թէ նոր անախորժութիւններ են պատահել...

ԱԼԲԵՐՏ. Ախ՛...

ԼՈՒԻԶԱ. Ասա, պատմիր, տեսնեմ, որտե՛ղ ես եղել:

ԱԼԲԵՐՏ. Ճեմարանում:

ԼՈՒԻԶԱ. Դու ժամը մէկին ելար, իսկ ճեմարանում ե-
րեքին...

ԱԼԲԵՐՏ. Այցելեցի Մօրիս Կօրմիէին: Հանգստացա՛ր:

ԼՈՒԻԶԱ. Մօրիս Կօրմիէի մօտ: Ի՞նչ պատճառով:

ԱԼԲԵՐՏ. Պէտք էր մի թուղթ, նոր վաւերագիր էլ յանձ-
նէի նորան և ի դէպ խօսէի մի հարցի մասին...

ԼՈՒԻԶԱ. Ի՞նչ հարցի:

ԱԼԲԵՐՏ. Զարմանալով տեսնում եմ, և բաւական միա-
մուծիւն էլ է իմ կողմից այդ ի հարկէ, որ մինչև այժմ չեմ
նկատել, թէ մարդու մտաւոր զարգացումը շատ քիչ ազդեցու-

Թիւն ունի նրա կեանքի վրայ: Գիտնականը իւր արարքների համար միշտ պատճառաբանութիւններ և բացատրութիւններ է գտնում զանազան խրթին հետեռդութիւնների շնորհիւ. մէ խեղճ հասարակ սայլապան հետեռում է իւր բնազդին, այն ինչ երկուսն էլ նոյն բանն են անում: Երկէ, երբ դու ինձ մեղադրում էիր ոճրագործութեան մէջ... ես պաշտպանւում էի և պէտք է ասել, վատ չէի պաշտպանւում: Ուշում եմ ասել, որ ասածներս խոր համոզուներ արդիւնք էին և ոչ թէ խնդրից խուսափելու փորձ: Բարձրագոյն նպատակների համար կարելի է և ուշադրութիւն չդարձնել մի քանի անգութ միջոցների վրայ. ես գոնէ այդպէս եմ համոզուած: Եւ այն թուէին, երբ իմ բանականութիւնս ինձ արդարացնում է, ես դարձեալ խղճի խայթոց եմ զգում, իբրեւ մի աւազակ: Այն ժամանակ էլ ի՞նչ միտք ունի չափել մարդու արարքը բանականութեան... գիտնականի բանականութեան հետ... եթէ դոքա իմ մէջ խղճի խայթոց են ծնեցնում, ինչպէս հասարակ բանուորի մէջ:

ԼՈՒԻՉԱ. Եւ. այդ էր խնդիրը:

ԱԼԲԵՐՏ. Մասամբ: Ահա խնդիրն ինչ էր.—պատճառն ի՞նչ է, որ ոչ հոգու անմահութեան, ոչ յաւիտենական կեանքի գոյութեան հաւատացող գիտնականը զոհում է իւր կեանքը իւր մերձաւորի համար: Մեզ համար շատ պարզ ու հասկանալի է այն մարդու արարքը, որն այդպէս է վարւում՝ երկնքում վարձատրուելու յուսով: Բայց ի՞նչ պատճառներից դրդուած ես զոհում եմ կեանքս այնպիսի սահմանափակ արարածների համար, որանց ես արհամարհում եմ, զոհում եմ ինձ, որ ապրում եմ գիտութեամբ, առանց յաւիտենականի հաւատի. իմ պարտքս պիտի լինէր, անշուշտ, պահպանել իմ կեանքս, իբրեւ ընտրելի, իբրեւ ամբոխի մէջ գտնուող և ամբոխի համար գործող մի լուսաւոր քահնա: Բայց որ գիտնականը զոհարել է իրեն մի խումբ տգէտ մարդկանց համար... ախր չէ՞ որ սա նշանակում է կողոպտել հասարակութիւնը... (Մենարդային ծիծաղով): Հետեւաբար, եթէ ես իմ սրտի մէջ մի բուռն, անզուսպ տենչանք եմ զգում կեանքս որևէ մէկի համար զոհարելու... ապա՝ ես պէտք է զսպեմ, ընկճեմ ինձ և չթողնեմ ինձ... Չէ՞ որ այդպէս է: Պարզ չէ՞:

ԼՈՒԻՉԱ. Ի՞նչ պատասխան տուեց քեզ Կորնէն:

ԱԼԲԵՐՏ. Հարցն ուղղակի չդրի նորա առաջ: Կարճ խօսակցութիւնից յետոյ ես դուրս եկայ նորա մօտից... Նա չափա-

զանց հետու է այն հարցերից, որոնք ինձ զբաղեցնում են:

ԼՈՒԻՒՋԱ. Դու ինքդ արդէն պատրաստի պատասխան ունես բեզ համար... Այն, ինչ որ դու ինձ ասացիր, այն պատկերը, որ իմ առաջ նկարագրեցիր: Դու, իբրեւ բարի աստուածութիւն, անցնում ես ժանտախտով և բորոտութեամբ վարակուածների միջով, տարածելով նոցա մէջ զիւռութեան լոյսը, որից և նոքա կենդանութիւն են ստանում... Իսկ դու լիբը թոքերով ներշնչում ես թունաւոր օդը... Դու քո կուռքն ունիս... Եւ եթէ դու զոհուես էլ, քո մոլեռանդութիւնն աւելի զոհադուհի ստացած կլինի:

ԱԼԲԵՐՏ. Այդ բոլորը հիանալի է տեսականօրէն: Բայց ոչ, յիշաւի այդպէս էլ է: Ճշմարիտ է: Չէ՞ որ դա իմ ամբողջ կեանքիս լուսատու սկզբունքն է: Բայց այնպիսի հակասութիւն այն բոլորի մէջ՝ ինչ որ մտածում, ինչ որ զգում և ինչ բանի համար որ տանջւում եմ... Ցանջուող, լացող ու սիրող մարդկութեան հետ, պէտք է սիրել և լալ նորա հետ:

ԼՈՒԻՒՋԱ. (Կամենալով համբուրել նորան). Այսօր դու — լաց ու արտասուքի տրամադրութեան մէջ ես:

ԱԼԲԵՐՏ. (Ծուլապիւնով). Մի վախենար... այդքան յոժմէջս կգտնուի... մինչև վերջը...

ԼՈՒԻՒՋԱ. Ասա, ինձ ևս մասնակից ալա տանջանքներիդ... Ասա, ի՞նչու Կորմէին առաջարկած հարցդ շրթունքներիցդ չի հեռանում:

ԱԼԲԵՐՏ. Է՛, դա կնոջ համար անելիք պատմութիւններից է:

ԼՈՒԻՒՋԱ. Իսկ ես Մօրիսից աւելի լաւ կըմբռնեմ: Աստահացիր մի անուս կնոջ արտի վրայ, առ րոպէ մոռանալով քո կուռքդ: Այսօր կուռքդ դաւաճանել է բեզ... խաբել է... ես պարզ տեսնում եմ. Գոյուհատ աղաղակներին նա միայն բժախնդիր եղբակացութիւններով էր պատասխանում:

ԱԼԲԵՐՏ. (Մեծամտութեամբ). Արգելւում եմ, ընդ միշտ, այդ լեզուով խօսել այն բանի մասին, որը... որը ես յարգում եմ և որի առաջ գլուխ եմ խոնարհում. վերջ տանք խօսակցութեան:

ԼՈՒԻՒՋԱ. Մի՛ բարկանայ, խնդրեմ: Եթէ զիտնայիր, թէ որչափ դժբաղդ եմ հէնց այն բանի համար, որ չեմ կարողանում արտայայտել այն բոլորն, ինչ որ կամենում եմ, այն ինչ այնպէս կկամենայի ասել բեզ բոլորը, բոլորը...

ԱԼԲԵՐՏ. Ասա, ուրեմն:

ԼՈՒԻՉԱՍ. Այբերա, դու ինձ ազատութիւն շնորհեցիր... որից ես հրաժարուեմ եմ... ես կամենում եմ քո՛ կինը լինել:

ԱԼԲԵՐՏ. Հնորհակալ եմ, Լուի՛գա, Բայց նախ քան կհամաձայնեմ, պարտաւորութիւն եմ համարում յայտնել քեզ մի... քաւական անախորժ նորութիւն: Ինձ նախազգուշացրել են, որ դասախօսութիւններին ժամանակ անախորժ դէպքեր են պատահատուում կատարել... և որ աւելի լաւ է մի փոքր համբերեմ, մինչև որ այդ խռովութիւնները կհանգստանան, մի երկու ամսով բացակայեմ և դասերս սկսեմ այն ժամանակ, երբ ամեն ինչ խաղաղած կլինի: Ուրիշ խօսքով, ինձ քաղաքավար եղանակով առաջարկուած են հրաժարական տամ. Եւ ես վճռեցի, որ այդ հրաժարականս ընդ միշտ, վերջնական կլինի: Այդ մասին իմ յարգելի պատճառներս ունիմ, որ ոչ ոքի չեմ ասիր: Ամեն բան թողնում, հեռանում եմ, — ձեմարան, հիւանդանոց... Այժմ տեսնո՞ւմ ես, որ ինքնապահութիւնդ քեզ շատ հեռու կը տանէ: Քաղաքից հեռանալս—մի տեսակ մեղքիս խոստովանութիւն է, որ հասարակական կարծիքի առաջ ինձ բոլորովին պիտի ոչնչացնէ: Մի խօսքով՝ ես կորած մարդ եմ:

ԼՈՒԻՉԱՍ. Ուրեմն ի՞նչ ես մտադիր անելու:

ԱԼԲԵՐՏ. Թողնել Փարիզը և բաշուել մի խուլ անկիւն:

ԼՈՒԻՉԱՍ. Ես էլ եմ գալիս հետդ:

ԱԼԲԵՐՏ. Դո՛ւ: Դու, որ լաց ու կոծ էիր դնում մի քանի շաբթով միայն գիւղ գնալու ժամանակ... Դեռ այսօր էր, որ չէիր կամենում ինձ հետ միասին ապրել՝ այստեղ, շրջապատուած ազգականներովդ... իսկ այժմ պատրաստ ես ընկերակցել ինձ իմ յաւիտենական միայնութեան վայրո՞ւմ...

ԼՈՒԻՉԱՍ. Այո՛:

ԱԼԲԵՐՏ. Երէկ ուրիշ կողմից էր փչում քամին. Ի՞նչ պատահեց. Խղճի խայթոցի արգասի՞ք... Եթէ այդպէս է, ապա ուրեմն պէտք է շնորհաւորեմ քեզ... որովհետեւ քո յարաբերութիւնը դէպի ինձ... քո ձգտումը, որով աշխատում էիր կեանքիդ շրջանից կտրել, դէն ձգել ինձ, որը և պատճառ դարձաւ, որ վճռեցի ինքս առաջինը երես թեքեմ քեզնից. Սակայն յետոյ, պէտք է ասեմ, ես ուրիշ բան վճռեցի. Մի խօսքով՝ կթողնես—կհեռանաս ինձնից, թէ կհեռանես ինձ, միևնոյն է, գործի ընթացքը գորանով ամենեկին չի փոխուիլ: Ինչպէս կկամենաս: Դու արտայայտուում ես ինձ քո սրտագին համակրու-

Թիւնդ, ես՝ դորա համար էլ շնորհակալ եմ քեզինքս:

ԼՈՒԻՉԱ. Իսկ ի՞նչ նոր բան ես վճռել:

ԱԼԲԵՐՏ. Ժամանակին կիմանաս:

ԼՈՒԻՉԱ. Ես հէնց այժմ էլ գիտեմ:

ԱԼԲԵՐՏ. Օ՛հ:

ԼՈՒԻՉԱ. Ես Մօրիսի մօտ էի... Ամեն ինչ լսեցի... Եւ ես

քեզ աւելի լաւ ըմբռնեցի, քան նա:

ԱԼԲԵՐՏ. (Սառնով թեամբ). Բացատրիր անկեղծօրէն:

Ի՞նչ հասկացար:

ԼՈՒԻՉԱ. Ինքզ քեզ վրայ նշոյն փորձն ես արել, որից մեռնում է այն մատաղ աղջիկը:

ԱԼԲԵՐՏ. Ուրեմն այդ է պատճառը, որ ինձ հետ դա-
լիս ես... Որովհետեւ երկար չեմ ապրելու:

ԼՈՒԻՉԱ. Միտում եմ քեզ... ահա այն պատճառը, որ ինձ
կապում է հետդ: Այո, այո՛: Այրերտ, հաւատա ասածիս, ես
հասկանում եմ քո կասկածամտութիւնդ. կատարելապէս արժա-
նի եմ դորան: Բայց և այնպէս, երդւում եմ, որ սիրտս քեզ
է պատկանում միայն: Այն րոպէից, երբ դու իմ ամուսինս դար-
ձար, այն րոպէից նա քեզ է պատկանում: Դու չափազանց շատ
ես ցաւ պատճառել նորան... Դա, իհարկէ, քո մեղքը է: Դու
բարի ես: Երբէք մաքուրդ էլ չէ անցել ինձ վիրաւորես, բայց
վիրաւորել ես... այո՛: Զարմանում ես: Չե՞ս կարող ենթադրել,
որ կարելի է տանջուել, ապրելով հաւատարիմ և բարի ընկե-
րոջ հետ: Բայց մի յիշի՛ր, մտաբերիր, թէ ի՞նչ էինք մենք,
Դու դանգատւում ես, թէ չնայելով որ գիտնականի խելք ունիս,
սակայն քո խիղճն էլ նոյնն է, ինչ որ կոշտ-կոպիտ բանուորի-
նը: Իսկ ո՞վ էր սիրում ինձ: Միայն կոշտ-կոպիտ բանուորը:
Ես դադարում էի քեզ համար գոյութիւն ունենալուց, հէնց
որ դու այն բարձրագոյն մտաւոր էակն էիր դառնում, որը ես
պաշտում էի: Դու այժմ լաւ պիտի հասկանաս ու ըմբռնես,
թէ ի՞նչ է նշանակում իրեն մեն-մենակ զգալ այն րոպէին,
երբ Կօրմիէի մօտից ես գալիս, որի առաջ դու իդուր քո սըր-
տի գաղտնարանի խորքերը բացեր... Ի՞նչպիսի աղաչանք-պա-
ղատանք չեմ արել քեզ... բայց դու՛ խուլ էիր: Ի վերջոյ ես
լռեցի, պապանձուեցի... բայց լռութիւնը մխիթարել չէ կարող:
Պատահել են րոպէներ, որ ես քեզ ատել եմ... տանել չեմ
կարողացել... վրդովուել եմ քո ներկայութեամբ: Բայց յար-
գանք՝ միշտ աածել եմ դէպի քեզ: Ծշմարիտ է, երէկ իմ արածս

ստորութիւն էր: Եւ դա յաւիտեանս ինձ համար մի ծանր կըշտամբանք կլինի: Բայց ես չափազանց դժբաղդ էի,—քո մէջ տեսնելով մի անխիղճ, մարդասպան, որ սպանում է այն խեղճ, երիտասարդ արջկանձ և ես այդ վերջին, դէպի բեղ տածած, զղացումս էլ, յարգանքս էլ կորցրի: Ես աշատութիւն էի որոնում և օգտուեցայ նորանից միայն, որպէսզի միամտաբար վազէի Կօրմիէի մօտ՝ հոգիս նրա առաջ բանայի: Ես կարծում էի որ կարելի է դնալ հոգեբանի մօտ խորհրդակցութեան, ինչպէս ակնաւիճառի մօտ ենք վազում զոհարեղէն գնելու համար: Եւ գիտե՞ս, ինչ շահեցի: Իմացայ, որ սիրում եմ բեղ և միմիայն բեղ: ԱՆԲԵՐՏ. Ճշմարիտ: Ճշմարիտ ես ասում:

ԼՈՒԻՉԱ. Ինչո՞ւ կարող եմ համոզել բեղ: Տեսնե՞մ ես բեղ եմ տալիս կեանքս՝ ամբողջապէս: Ինձ էլ պատուաստիր քո թոյնը, ինչպէս պատուաստել ես Անտուանետային, ինչպէս բեղ: Կապիր անդամահատական սեղանի վրայ և ահօսիք ինձ քո մահադու պատուաստներովդ: Որքան աւելի տանջես, այնքան աւելի ես ինձ աւելի բազում կզգամ: Վերջին կաթիլ արիւնս կըտամ առանց խնայելու քո մի վայրկեան միայն ինձնով հրճուելու հայեացքի համար:

ԱՆԲԵՐՏ. (Ընկնելով նորա գիրկը) Լուե՛կա. Իմ սիրելի, անգին ամուսին: Ամբողջ կեանքս բեղ հետ եմ անցրել, առանց բեղ ճանաչելու: Որքան քիչ բան գիտենք և ինչպիսի ծանր գնով ենք ձեռք բերում այն, ինչ որ գիտենք, Եւ մենք ամենքս էլ պղպէս ենք,—Մօրիսը, ես, շատ բարձրից ենք նայում թշուառ մարդկութեան վրայ և չենք տեսնում այն, ինչ որ կնկատէր նոյն իսկ մանուկը: Մենք գիտում ենք հեռուն, իսկ մեր մօտի պատը բաժանում է մեզ մեր կողքին տանջուող ներքից: Այն ինչ, մենք էլ զերծ չենք տանջուելուց: Մենք կարիք ունինք սիրող սրտի, մի կրօնքի, որի վրայ կարողանայինք գլուխ իջեցնել և լալ մեր ցաւերը: Այո՛, ես լալիս եմ: Հպարտանալու տեղիք չունիմ ամենեւին... Իմ մէջս մի այլ էակի գոյութիւն եմ զգում, որ մաքառում մեռնում է և որին հասկանալ չեմ կարողանում: Նա ինքնադոհութիւն է պահանջում ինձնից. ես ինքնադոհութիւնը հրէշաւոր բան եմ համարում,—բայց՝ ինքս ինձ օգանում եմ: Կեանքիս վախճանը անասելի յիմարութիւնով է վերջանում: Մեռնել իբրեւ նահատակ, երբ հաւատք չունիս... Անէութեան առաջ կարծես մեզ ցոյց տալ ենք կամենում: (Մտնում է Եւգենիան):

ՏԵՍԱՐԱՆ III

ԼՈՒԻԶԱ, ԱԼԲԵՐՏ ԵՒ ԵՒԳԵՆԻԱ.

ԵՒԳԵՆԻԱ. Այն աղջիկը, որի մասին տիկինն ասում էր...
ԼՈՒԻԶԱ. (Ալքերտին). Անտուանետան է: Այսօր ես
մենաստանի մայրապետին տեսայ ե...

ԵՒԳԵՆԻԱ. Դուք կամենում էիք տեսնել այն սենեակը,
որտեղ պիտի ապրէ նա:

ԼՈՒԻԶԱ. Հրաւիրիր նորան այստեղ, Իսկոյն կգամ: (Նւ-
զննիւմ գնում է):

ՏԵՍԱՐԱՆ IV.

ԼՈՒԻԶԱ, ԱԼԲԵՐՏ ԵՒ ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ

ԼՈՒԻԶԱ. (Համբուրելով): Բարե, սիրելի զաւակս
ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. (Նրկոււմ). Մայրապետը խնդրեց կըր-
կին իւր շնորհակալութիւնը մատուցանել ձեզ՝ մենաստանի
կողմից:

ԼՈՒԻԶԱ. Տէր Անտուան, նա արդէն ինձ չափից աւելի
շնորհակալութիւն յայտնեց... կերթամ, տեսնեմ, որտե՞ղ պիտի
տեղաւորենք ձեզ, Ամբողջ օրն զբաղուած էի: (Դուրս է գնում):

ՏԵՍԱՐԱՆ V.

ԱԼԲԵՐՏ ԵՒ ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ.

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. (Մօտենալով Ալքերտին): Պ. բժիշկ,
ես կամենում էի ձեզ ասել... Այսօր ինձ հարց ու փորձ արին...

ԱԼԲԵՐՏ. Ո՛վ:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Մայրապետը:

ԱԼԲԵՐՏ. Ի՞նչի մասին:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Հիւանդանոցում եղած ժամանակ ձեր
հոգատարութեան մասին:

ԱԼԲԵՐՏ. Է՛, յետոյ ի՞նչ: Պարծում եմ, որ լաւ ցուցում
տուած պիտի լինիք, եթէ ինձ են հաւատում ու յանձնում...

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Անհոգ եղէք, պ. բժիշկ: Բայց ե այնպէս
ես հասկացայ...

ԱԼԲԵՐՏ Դէ ասացէք...

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ձեզ մեղադրում են... Ներեցէք, խնդրեմ, եթէ այս մասին խօսում եմ... Բայց անհանգիստ եմ

ԱԼԲԵՐՏ Խնչ յիմարութիւն է... Ձեզ վախեցնում են:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Օ՛, ես երբէք երկիւղ չեմ կրում իմ մասին: Մի անգամ արդէն Աստուած ինձ փրկեց, մէկ էլ կփրկէ՝ եթէ կամենում է: Բայց դո՛ւք: Ձեզ վտանգ չ'է սպառնում...

ԱԼԲԵՐՏ. Մի քանի յիմարների տարածած լուրեր են: Մի հաւատարմ:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ա՛խ, որչափ ուրախ եմ: Միայն թէ ձեզ բան չպատահէր. վաճառում ամենքն ինձ հետ շատ լաւ են, բայց ոչ որ իմ և իմ բաւականութեան մասին այնպէս հոգածութիւն չէ ցոյց տուել, ինչպէս դուք: Դուք շատ անգամ շահակրատում էիք հետս... Նարինջ էիք բերում, քաղցրաւենիք... Ձկարծէք թէ բկլիկի մէկն եմ. բայց այնքան զբաղուած մարդը, ինչպէս դուք...

ԱԼԲԵՐՏ. Էլի նորից սկսեցինք մեր յիմարութիւնները: Եւ նրա համար, որ ինձ հաճոյսխօսութիւն անէք...

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Մի՛ յանդիմանէք ինձ: Ինչպէս չէք սիրում, երբ ձեզ զովում են: (Կամուցով): Դուք այնքան բարի, լաւն էք, որ իմ պատճառով տխրում էիք: Ես նկատում էի այդ, երբ դուք դիտում էիք այն կարմիր բշտիկը:

ԱԼԲԵՐՏ. Լաւ դիտող չէք երևում:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ոչ, ոչ, ինձ չէք կարող խաբել: Հիւանդանոցում, երբ ես այնպէս վատ էի, ծանր... յիշում եմ... պառկած էի, մեռելի պէս, դուք միւս բժիշկների՝ ասացիք— «Խեղճ աղջիկ, մի շաբաթ հաղիւ ապրէ»... Յետոյ, երբ, ամենքը դուրս գնացին, դուք մենակ վերադարձաք և... ա՛յ այսօտեղս... ծակեցիք...

ԱԼԲԵՐՏ. Խնչ, դո՛ւք...

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Այո, ես՝ զիտակցում էի, բայց չչարժուեցի... Այն ժամանակ իսկկռահեցի, որ նոր միջոց էք կամենում փորձել ինձ վրայ... մի յանդուգն միջոց... Իսկ այժմ, երբ մայրապետն ասաց ինձ... այժմ հասկանում եմ, միանգամից զլի ընկայ, թէ ի՞նչ էք արել ինձ հետ: Մեզնում քոյրերից մէկը անցեալ ծննդեան դարանից մեռաւ: Մեծ զոհաբերութիւն էր պահանջում նորան խնամել յանձն առնելը... մանուանդ վերջին օրերը... (Լռութիւն):

ԱԼԲԵՐՏ. Ի՞նչ անուն են տալիս ինձպէսներին:
ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ձեմ հասկանում ի՞նչ էք ասում:

ԱԼԲԵՐՏ. Մարդասպան, ոճրագործ, այնպէս, չէ՛:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ա՛յ, ես գիտէի, որ դուք տանջուում էք:

Բայց պէտք չէ՛: Եթէ այն ժամանակ իմ համաձայնութիւնս հարցնէիք, իսկոյն կհամաձայնէի: Մի՛թէ դուք ինձ այնքան իմար, անհասկացող էք համարում, որ չեմ իմանում, թէ իմ հիւանդութիւնս կարող է միջոց տալ մի խումբ թշուառներին բժշկութեան: Ես կամենում էի ողորմած բոյր դառնալ և ամբողջ կեանքս հիւանդներին նուիրել: Եւ ահա փոխանակ կեանքս կամաց-կամաց, կաթիլ կաթիլ տալու, մի անգամից եմ տալիս (Ընկնում է Ալքերտի ստընըրը): Երբ ես իմացայ թէ ինչ բանի մէջ են մեղադրում ձեզ, այն ժամանակ իսկոյն ըմբռնեցի, որ եթէ ձեզ թողլ չտան փորձեր կատարել, դուք այդ փորձերը ձեզ վրայ կանէք: Մի անէք այդ բանը, պ. րօիշկ: Ես ինքս պատրաստ եմ ձեր դիտողութիւնների համար ծառայել:

ԱԼԲԵՐՏ. Իսկ խի՞ղճը: Դու չե՞ս մտածել, որ կատարած սխալս, ինքս ինձ ներել չեմ կարող և հէնց այդ պատճառով էլ կարող եմ անձնասպանութիւն գործել:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Երկիրդով: Անձնասպանութիւն: Դու՛ք, Ամբողջ աշխարհը զրկել ձեզ պէս մարդուց, մի թշուառ աղջկայ պատճառով...

ԱԼԲԵՐՏ. Իսկ իմ ցանկութիւնս այդպէս էր: Եթէ դեռ ես այժմ ինձ կենդանի ես տեսնում, այդ էլ այն պատճառով, որ մի առ ժամանակ միայն յետաձգեցի. ես կամենում եմ դիտողութիւններիս վախճանը տեսնել: Իսկապէս այդպիսի հետաքրքրութիւնը ներքիլ է:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ի՞նչ ասել կուզի, եթէ դորանով ուրիշներին էք փրկում: Դուք ձեզ այնպէս էք արդարացնում, որ կարծէք ոճրագործ լինիք: Ա՛յ, եթէ չվերջացնէք ձեր դիտողութիւններն, այն ժամանակ դուք յիշաւի ոճրագործ կլինէք: Դուք դիտութեան համար էք ստեղծել: Դժբաղաբար, դուք կրօնական զգացում չունիք, ուստի և պարտաւորուած էք այդքան երկար դատողութիւններ տեսնու, որպէսզի բարի լինիք: Իսկ ես, եթէ կրօնասէր չլինէի, շատ բա՛ն կարժենայի: Դուք, կարծես, զարմանում էք, որ ես պատրաստ եմ մահուան: Իսկ ես, բաղդաւոր եմ զգում ինձ, որ գոնէ առիթ կունենամ մօտենալու մեզ՝

մարդկային ցեղի համար տանջուած Խաչեցեալին:

ԱԼԲԵՐՏ. Բայց դու զգու՛ս ես, թէ ինչպիսի ոյժ ես ներշնչու՛մ ինձ: Դու չես ստիպու՛մ ինձ, որ ես երես թեքեմ, դաւաճանեմ իմ կուռքին: Դու չես սկսիլ ծաղրել նորան: Կարող եմ յայտնել քեզ իմ որոշումս: Դու կարող ես ըմբռնել այդ, որովհետեւ արգէն գիտակից ես՝ առաջինը մատնացոյց անելով դուրս վրայ: Ինձ վրայ էլ եմ պատուաստել այն, ինչ որ քեզ վերայ եմ կատարել: Այժմ պէտք է օգտուեմ կեանքիս մնացած վերջին օրերից: Ես կլարեմ կենսական բոլոր ոյժերս և կրկնակի կեանքով կաշխատեմ ապրել,—մինչև վերջին շունչս գիտելով մեզ՝ երկուսիս: Բո աչքերը փայլում են: Երակներդ մէջ էլ նոյն արիւնն է հոսում, ինչ որ իմիս մէջ: Այո՛, Երեւան ամենքից աւելի լաւ ըմբռնեց ինձ: Պատճառն ի՞նչ է. Ո՛րտեղիւ ենք ստանում այդ մեծ ոյժը:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Աստծուց, պ բժի՛շկ. (Մտնում է Լուիզան):

ՏԵՍԱՐԱՆ VI

ԱԼԲԵՐՏ, ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ ԵՒ ԼՈՒԻԶԱ.

ԱԼԲ. ՐՏ. (Յոյց տալով Անտուանետտային). Ամեն ինչ գիտէ:

ԼՈՒԻԶԱ. Եւ ներո՛ւմ է քեզ:

ԱԼԲԵՐՏ. Ներողութեան համար խօսք իսկ չէ եղել: Այն, ինչ որ ես ձեռք եմ բերել մտաւոր աշխատանքի աննկարագրելի ջանքերի շնորհիւ, սա առաջարկեց մարդ. հիացնող պարզութեամբ,—զոհարեւել ինքն իրեն. մերձաւորների բարօրութեան համար: Գերեզմանի ճանապարհին կանգնած է ժպիտն երեսին ու շրթունքներին և պնտեղից ինձ համար ևս յուսոյ ճառագայթներ է ույարկում: Տեսնո՛ւմ ես, ամենահրաշալի գիւտն անգամ անպաշտպան է մարդկանց աննպաստ դատասնից, այն ինչ, եթէ մի երեխայի կեանքն աջատելու համար ջուրը նետուեմ, այն ժամանակ ամենքը՝ հարուստ թէ աղքատ, ամենքը կգովաբանեն ինձ: Հետեաբար, կայ մեր արարքների ու գործերի մէջ մի բան, որ կարող է միացնել, շաղկապել մարդկանց իւր գերադոյն գեղով: Եւ այդ գեղեցկութիւնը այն ձգտումն է, որ մարդկութիւնն ունի դէպի միակ լոյսը, ես այդ լոյսը որոնումեմ գլխիս, բանականութեանս մէջ, այն ինչ

պէտք է որոնել ու գտնել միայն սրտի մէջ: Մերձաւորի համար տանջուելու այդ անյադուրդ կարիքն ամենքիս մէջ կայ, որքան էլ մենք անհեթեթ համարենք այդ զգացումը: Մի բանի ժամ առաջ բիշ էր մնում շնչասպառ լինէի ինձ ամբողջապէս տիրապետող զայրոյթից, երբ այդ անհեթեթ, ուրիշների համար կեանքս զոհաբերելու անտեղի կարիքն էի զգում մէջս: Կօրմիէի բառերն էի կրկնում, — «Բնութիւնը ստոր անշնորհապարտութեամբ միայն կպատասխանէ բեղ»: Ասելը հեշտ է: Բայց յիշարաւ ընդթիւնն այդպէ՛ս է: Ուժեղի իրաւունքը տիրապետում է միայն մարմնի, կեանքի վրայ: Բայց ոչ մտքի վրայ: Մաքի, բանականութեան առաջ երրեւիցէ պատկերացած ամենագեղարդոյն նշանը — խաչն է, այդ տանջանքի գործիքը: Ո՞րտեղից է բղկում այդ յոժը, որ ամբողջ աշխարհի մարդկութիւնը բերում, կապում է նորա հետ մի ընդհանուր մտքով, ձգտումով, — զոհաբերել իրեն իւր մերձաւորի համար: Ծովային մակընթացութիւնը մօտաւոր լուսատուի ձգողական յոժն է մատնացոյց անուամբ Մի՛թէ մեր հոգեկան, անվերջ մակընթացութիւնները ձգւում, քաշւում են դատարկ, ամեն ինչից զուրկ երկնքից:

ԼՈՒԻՉԱ. Դու հաւատո՞ւմ ես:

ԱԼԲԵՐՏ. Ո՛չ: Որպէս զի հաւատամ, պէտք է մի շոշափելի, տեսանելի փաստ ունենամ, իսկ մենք շատ հեռու ենք դժբանից: Օ՛, բանականութիւնը: Ինձ այնտեղ չէ առաջնորդում, որտեղ ես եմ կամենում:

ԼՈՒԻՉԱ. Միայն թէ յուսահատութեան չտանէ:

ԱԼԲԵՐՏ. Դործ, գործ: Ես կաշխատեմ գործել մինչև վերջը:

ԼՈՒԻՉԱ. Բայց արդեօ՞ք հոգեկան անդորրութիւն կտայ նա բեղ:

ԱԼԲԵՐՏ. Ես չեմ հաւատում Աստուծոյ, բայց մեռնում եմ պնպէս, որ կարծես թէ հաւատում էի նորան: Եւ հէնց այդտեղ է և իմ հոգեկան անդորրութիւնս: Ես ինձ առոյգ եմ ըզգում. յոժերի նոր հոսանք եմ զգում մէջս, որովհետեւ ինձ հասկացաւ այս երեխան, որ մեռնում է ինձ հետ: Ահա թէ որտեղից է ըղիւձ իմ յոժս: Իմ փրկութիւնս այն է, որ մի խեղճ, տգէտ ազնիւ իմ ձեռքիցս բռնած առաջնորդում է դէպի մի անյայտ, գեղեցիկ լոյս: Տեսնո՞ւմ ես, այժմ՝ կարող եմ դատել իրրեւ դիտնական, բայց գործել՝ ինչպէս մի սովորական աշնիւ և պարզ մարդ: Կհասնե՞նք արդեօք այն աստիճանին, որպէս զի միմիայն բանականութեամբ կարողանանք ըմբռնել բարոյական

բարձրագոյն դրութիւնները: Այս դէպքում բանականութիւնը իւր որոշ տրամաբանութիւնն ունի, իսկ հոգին՝ իւրը, որ անհասկանալի է ինձ համար, բայց պարզ ու որոշ Անտուանետտայի համար: Եւ երբ հարց է ծագում, թէ ինչպէս մեռնենք, այսինքն աննպատակ չկորչենք՝ շանսատակ չլինենք, այլ ազնիւ ծանապարհով մահ ընդունենք, այդ դէպքում մենք՝ փիլիսոփաներս պէտք է բարձրագոյն տրամաբանութեան դասեր առնենք հասարակ, խոնարհ Անտուանետտաներից, որոնք պաշտուած, հոգի են տալիս Աստուծոյ համար և օրինակ վերցնենք այնպիսի պարզ սրտերից, որոնք սիրում հերոսաբար՝ ինչպէս դու:

ԼՈՒԻՉԱ. (Գրկախառնելով նորան): Ինչ, դու կարող ես ասել, որ մեզնից սովորելու բան ունիս Դո՛ւ: Օ՛, Ալբերտ: Այժմ տեսնում եմ, որ մեր մէջ կարող է գոյութիւն ունենալ, միութիւն: Այժմ մենք նոր կեանք կստանանք կեանքի այն եղանակով, որ միշտ երազում էի: Մեր մէջ այլ ևս ոչ մի խառնոց, արգելափակ գոյութիւն չունի:

ԱԼԲԵՐՏ. (Ազատուելով). Արգելափակ չկա՛ր (Յոյց տալով կրծքի վրայ պատուաստի տեղը): Մոռացե՛լ եմ:

Վ Ա Ր Ա՛Գ՝ ՈՒԹԻՐ